№ 9 ՅՈՒՆՎԱՐԻ 26 (ՓԵՏՐՎԱՐԻ 7) 1878 ՅՈՒՆՎԱՐԻ 26 (ՓԵՏՐՎԱՐԻ 7) № 9

ԵՕԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 ռուբլ, կէս տարվանը 6 ռուբլ։

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը և պ. Ծատուրեանի խանութում

Օտարաքաղաքացիք դիմում են ուղղակի Тифлисъ. Редакція „Мшакъ“

ՄՇԱԿ

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ (Բացի կիրակի և տօն օրերից)։

Յայտարարութիւնները ընդունվում են ամեն լեզուով։

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

„ՄՇԱԿ“

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

1878 թվից

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՎԻ ԱՄԵՆ ՕՐ, բացի տօն և տօներին հետեւեալ օրերից։

Լրագրի դիրքը և պրոգրամման նոյն են մնալու։ Մենք կը ստանանք ԱՆՓԱԿԱՆ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ։ «ՄՇԱԿԻ» տարեկան գինը 10 ռուբլ է, կէս տարվանը 6 ռուբլ։ Գրվել կարելի է ԽՄԲԱԳՐԱՏԱՆ ՄԷՋ և պ. ԾԱՏՈՒՐԵԱՆՑԻ խանութում։

ԱՌԱՆՁԻՆ ՀԱՄԱՐՆԵՐԸ կը ծախվեն 5 կոպէկով հատը։

Օտար քաղաքներից պէտք է դիմել հետեւեալ հասցէով՝ ТИФЛИСЪ Редакція «Мшакъ».

Խմբագիր—Հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Պատերազմական վերջին անցքերը։—Ներքին տեսութիւն։ Ներքին լուրեր։—Արտաքին տեսութիւն։ Կ. Պոլսի հայերի շարժումը։ Ֆրանսա։ Բասպայլ։—«Մշակի» հեռագիրներ։ Արտաքին լուրեր։—Յայտարարութիւններ։—Տեղեկացոյց։—Բանասիրական։ Այնտեղ և Այստեղ։

ՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ ՎԵՐՋԻՆ ԱՆՑՔԵՐԸ

Պլեվնան բացի իր բնական ամրութենից, իրանց զենուորական գործը շատ լաւ հասկացող Թիւրքաց զենուորների ձեռքով անառիկ մի դիրք էր դարձած և պատի նման պահում էր իր առաջ ռուսաց զօրքերին, չը թողնելով մի քայլ առաջ գնալ դէպի երկրի սիրտը՝ Ադրիանօպոլ և Կ. Պոլիս։

Ամբողջ աշխարհը հետաքրքրութեամբ սպասում էր, թէ ինչ կը պատահի։ Ամեն մի պետութիւն իր հաշի համեմատ կամ ցանկանում էր Պլէվնայի մնալը, կամ նրա անկումն։ Հատերը կարծում էին, որ Պլէվնան ընկնելուց յետոյ կամ խսկոյն խաղաղութիւն կը լինի, կամ պատերազմի մէջ կը խառնվեն և մի քանի եւրոպական այլ պետութիւններ, որոնք որ և իցէ կերպով հետաքրքրված էին արևելեան հարցով։

Վերջապէս ընկաւ Պլէվնան իր հետ տանելով հազարաւոր զոհեր թէ Թիւրքերի և թէ ռուսների կողմից, բայց մեծ պետութիւնների մէջ եղած յարաբերութիւնները մնացին անփոփոխ, միայն Սերբիան, որ սպասում էր Ռուսաստանի զէնքի աջողութեանը, պատերազմ յայտնեց Թիւրքիային։

Պլէվնան ընկաւ և այդպիսով ճանապարհ բացվեց ռուսաց յաղթող զօրքերին դէպի Թիւրքիայի երկու մայրաքաղաքները՝ Ադրիանօպոլ և Կ. Պոլիս։

Մի մեծ գժուարութիւն էր մնում, որ նոյնպէս պէտք է յաղթէին մեր զօրքերը. նոքա պէտք է անցնէին Բալկանեան սարերը, պատերազմելով ոչ թէ միայն թշնամու զօրքերի դէմ, այլ և բնութեան հետ։ Նորին Բարձրութեան Դունայի զօրքերի գլխաւոր հրամանատարի հեռագիրներից երևում էր, որ զօրքերը անցնում էին այնպիսի տեղերից, այնպիսի ցուրտ եղանակին, որ ուրիշ զենուորների համար անկարելի էր։ Վերջապէս այդ գործն էլ կատարվեցաւ։ Բալկանեան սարերը անցնելով գեներալներ Բադեցկի, Սկոբելև և Գուրկո շրջապատեցին Թիւրքաց միակ զօրաբաժինը, որ կանգնած էր Շիպկայի մօտ և որ միակ զօրքերն էին, որոնք կարող էին ընդդիմանալ ռուսաց զօրքերի առաջ գնալուն։ Այդ զօրքերի ընդդիմութիւնը ի զուր էր։ Այդ զօրաբաժինը կամ պէտք է ոչնչանար, կամ պէտք է գերի ընկնէր։ Ամեն կողմից շրջապատած՝ այս զօրքերը գերի ընկան, մեծ ջարդ կրելուց յետոյ։ Սրանք այն զօրքերն էին, որոնք պէտք է Թիւրքաց կառավարութեան կարծիքով յետ խլէին ռուսներից Շիպկայի անցքը քանի Պլէվնան պաշտպանվում էր։

Շիպկայի զօրաբաժնի գերի ընկնելուց յետոյ Ռուսաց, Սերբեացիների և Ռումինների զօրքերը առան միմեանց ետևից Ֆիլիպօպոլ, Սոֆիա, Ադրիանօպոլ և Բազարջիկ։ Ադրիանօպոլի առնելը նոյնչափ նշանաւոր է, որչափ նշանաւոր կը լինէր Կ. Պոլսի առնելը, թէպէտ Թիւրքաց այդ երկրորդ մայրաքաղաքը ոչ ոք չը պաշտպանեց և բնակիչները անգամ փախչում էին այդ քաղաքից Կ. Պոլիս, երևակայելով, որ մեր զօրքերը նրման են իրանց բաշի-բուզուկներին։

Դեռ քանի այդ քաղաքը չէր առնված եւրոպական քաղաքագէտները կարծում էին, որ այդ քաղաքի մէջ ռուսները կը թելադրեն խաղաղական պայման-

---

ԱՅՆՏԵՂ ԵՒ ԱՅՍՏԵՂ

(ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՏՊԱՒՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ)

—

VII.

Անցան մի քանի օրեր Մարուքեանցի հետ իմ ունեցած վերջին խօսակցութենից յետոյ։ Նա չէր մտնում իմ սենեակը, ես էլ գիտենալով որ նա սաստիկ զբաղված է առաջին կուրսից երկրորդը անցնելու համար տալու հարցաքնութիւններով, ինքս էլ չէի ուզում խանգարել նրան պարապմունքների մէջ։ Նա Սալիմեանցի հետ միասին համալսարան էր մտել, Սալիմեանց արդէն երրորդ կուրս էր անցել, իսկ սա երկու տարի մնալով առաջին կուրսի վրա, որքան և անպատրաստ էր զգում իրան, սաստիկ աշխատում էր որ այս տարի գոնէ անցնէ երկրորդ կուրսը։

Եթէ ոչ բարերարը, որ այս անգամի համար, այն էլ որդու յատուկ խնդիրքով, բարեհաճեց ներել իր որդեգրին նրա ծուլութեան ու անընդունակութեան յանցանքը, իր վերջին նամակի մէջ սպառնում էր Մարուքեանցին զրկել նրան քսան և հինգ բուբլու ամսական ստիպենդիայից, եթէ նա դարձեալ մի ամբողջ տարի մնայ բժշկական ֆակուլտետի կուրսերից մինի վրա, և ուղիղ հինգ տարուց յետոյ չը վերջացնի իր ուսումը։

Բայց որքան զարմացայ ես, երբ իմացայ թէ Մարուքեանց առանց ոչ ոքից հրաժարական առնելու քանի մի օր է արդէն որ թողել էր իր բնակարանը, վճարել էր տան տիկնոջ իր սենեակի ամսական վարձը և անցել էր Մոսկվայի մի շատ յետընկած փողոցի վրա գտնվող մի տուն։

Ինձ հետաքրքիր էր իմանալ ինչ էր Մարուքեանցի մեր տանից փախչելու պատճառը։ Ես վճռեցի գնալ նրա մօտ, երբ նա իր հարցաքնութիւնները վերջացած կը լինի, որ չը խանգարեմ նրան իր պարապմունքների մէջ։

VIII

—Ամօթ չէ՞ ձեզ համար, որ փախաք այդպէս, առանց ոչ ոքից հրաժարականն առնելու, ասացի ես Մարուքեանցին, մտնելով մի նեղ դրան միջով, չորրորդ յարկի վրա գտնվող նրա փոքրիկ և մութ սենեակը, նրա նոր բնակարանը։

—Ներեցէք, որ դուրս եկայ առանց ձեզ մնաս բարև ասելու։

—Բայց ինչ էր պատճառը որ թողեցիք ձեր հին բնակարանը, հարցրի ես։

—Պատճառներ շատ կան և գլխաւորներից մինը այն է որ այստեղ աւելի էժան է և աւելի հանգիստ է։ Ես կարողացայ աւելի լաւ պարապել և վերջապէս ինձ աջողվեցաւ անցնել երկրորդ կուրսը։

—Լսեցի. շնորհաւորումեմ։ Բայց այդ են միայն ձեր փախչելու պատճառները, թէ ուրիշ պատճառներ էլ կան։

—Կան, պատասխանեց նա, ժամանակ առ-ժամանակ իր սովորական ճակատի տակի հայեացքները ինձ վրա գցելով, բայց դրանք են գլխաւորները։ Եւ ճշմարիտ, մինթէ կարելի էր այն տան մէջ պարապել, շարունակեց նա, դուք մինթէ չէիք լսում թէ ինչ աղմուկ, ինչ սկանդալներ էին լինում այնտեղ ամբողջ օրը։ Ես զզվեցի այն անբարոյական շրջանից, այն պառաւ, տգեղ տանտիկնոջից իր երիտասարդ սիրեկանով, իր երկու որդիներով, որոնցից ամեն մէկը կարծեմ մի ճուխտ սիրեկաններ ունի, զզվեցի ամեն առաւօտու օր հարեւան սենեակներից հանդիսանքներ, սկանդալներ, ծեծ լսելուց....Ահա այդ տեսակ անբարոյական շրջանում է կրթվում հայ ուսանողութիւնը, աւելացրեց Մարուքեանց, կարծես թէ ինքն իրան հետ խօսելով.... Այդ անբարոյական շրջանի մէջ, շարունակեց նա փոքր լռութիւնից յետոյ, ես մէկի վրա եմ ցաւում միայն....Նա մեղք է այնտեղ, վերջացրեց նա հազիւ լսելի ձայնով։

Այդ խօսքերը արտասանելու ժամանակ ինձ թվաց թէ Մարուքեանց փոքր ինչ կարմրեց։ Ես երբէք նրան չէի տեսել կարմրելիս և չէի կարծում անգամ որ նա կարող է կարմրել։

—Այդ ով է այն էակը, հարցրի ես դիտմամբ, որին դուք այդքան խղճումէք և մեղք էք համարում նրան այն անբարոյական շրջանի մէջ մնալ։

—Մինթէ՞ դուք չը գիտէք ես ում վրա եմ խօսում, մինթէ՞ չը գիտէք որ այն կեղտոտ շրջանի մէջ կայ մի էակ որ ճշմարիտ ծաղիկ կարող է համարվել համեմատելով այն շրջանի հետ և որ ուրիշ ոչ ոք չը կայ ում կարելի էր խղճալ....Բայց ձեր կողմից լաւ չէ, որ դուք ինձ ծաղրումէք, աւելացրեց նա....Ես ամենքից այդ կարող էի սպասել, բայց ձեզանից չէի սպասում, վերջացրեց նա բարկացած, գունաթափ դէմքով տեղից վերկենալով։

—Ներեցէք, ես բոլորովին չէի ուզում ձեզ վիրաւորել։ Կարծեմ որ մեծ զանազանութիւն կայ հանաք անելու և ծաղր անելու մէջ։

Մարուքեանց կանգնած էր իր սենեակի մէջ տեղ, իր մի ձեռքով իր երեսը ծածկելով։ Ցանկարծ նա ձեռքը յետ առաւ երեսից, մի քանի քայլ արեց իմ ուղղութեամբ և նայեց ուղղակի իմ երեսին,—մի սովորութիւն որ նա չունէր առաջ։

—Դուք կատարեալ իրաւունք ունէիք, արտասանեց նա հանգիստ ձայնով, կատարեալ իրաւունք ունէիք ոչ թէ միայն հանաք անել իմ վերաբերութեամբ, բայց և ծաղրել ինձ։ Դուք առաջինն էք, որին ես խոստովանվեցի թէ սիրումեմ, սիրումեմ իմ կեանքիս մէջ առաջին անգամ, և մի և նոյն ժամանակ ինքս գիտեմ թէ իրաւունք չունեմ սիրելու։ Այդ տեսակ այլանդակ, տգեղ կազմուածք, տգեղ, հրէշաւոր դէմք ունեցողը արդեօք իրաւունք ունի սիրելու։

ները։ Այս ճմարիա խաղաղական պայմանների հիմունքները Թիւրքաց հաւատարմատարները և Մեծ Իշխանը այդ քաղաքում ստորագրեցին։ Այժմ Աւստրիան նոր է տալիս իր բողոքը, իսկ «Republique Francaise» լրագիրը այն միտք է յայտնում, որ առանց եւրոպական պետութիւնների խորհրդի պատերազմող կողմերը կարող են վճռել միայն պատերազմական ծախսերի վարձատրութեան հարցը։

Քրիստոնեաներին վերջապէս կը տրվեն այն արտօնութիւնները, որ մեր Կայսրը պահանջում էր Թիւրքիայից առանց պատերազմի։ Եւրագիրներից արդէն յայտնի է ընթերցողներին, թէ ինչպիսի արտօնութիւններ են դրանք։ Մի և նոյն ժամանակ յոյս ունենանք որ հայերի մասին էլ, որոնք նոյնչափ տանջված և անարգված են Թիւրքաց անընդունակ կառավարութենից, մեր Կայսրը կը հոգայ։ Այդ մասին հեռագիրը ոչինչ չէ հաղորդում։ Բայց այն էլ պէտք է ի նկատի ունենալ, որ հեռագիրը շատ սահմանափակ տեղեկութիւններ է հաղորդում։

Հապա ցաւալի կը լինէր, եթէ հայերը ոչինչ արտօնութիւն չը ստանային այն յարաբերութենից յետոյ, որ նոքա ունէին Թիւրքաց տէրութեան հետ պատերազմի ամբողջ ընթացքում և մանաւանդ այն պատասխանից յետոյ, որ նրանք տուին Բարձր Դռանը, երբ Թիւրքաց տէրութիւնը նրանցից զինուորներ էր խնդրում։

Այսպէս գնաց մինչև այժմ պատերազմը Բալկանեան թերակղզու վրա և այս դրութեան մէջ են առ այժմ քրիստոնեաները։ Ինչ կը վերաբերի Հայաստանի մէջ եղած պատերազմական գործերին նրանք նոյն դրութեան մէջ են. ռուսաց զօրքերը կանգնած են Երզրումի տակ։

Վ. Տ.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Լսում ենք, որ մի քանի թատրօնասէր երիտասարդներ շուտով կը տան ԹԻՖԼԻՍՈՒՄ մի ներկայացումն վոդեվիլներից կազմված։ Պիեսներից մէկը «Բռնի ամուսնութիւն է։» Ներկայացման եկամուտը պ. պ. թատրօնասէրները նշանակել են Մարիամեան ուսումնարանի օգտին։ Ցանկալի կը լինէր, որ պարոնները լաւ պատրաստվէին և միայն այդ մէկ ներկայացումով չը բաւականանային։

—

„Донск. Пчела“ լրագրում կարդում ենք. «Մեզ հաղորդում են, որ կերօսինի մէջ խառնում են շատ վնասակար նիւթեր։ Լամպից դուրս եկած ծուխը այնքան վատ է ազդում, որ բաւական է մի քանի ժամ մնալ կերօսինով լուսաւորված սենեակում, որ գլուխը սկսի ցաւել։ Թող դատեն, թէ որքան վնասակար պէտք է լինի այդպիսի կերօսինը այն մարդկերանց համար, որոնք ժամերով են պարապում։ Մենք կարծում ենք, աւելացնում է լրագիրը, որ այս հարցը այնքան նշանաւոր է, որ պէտք է իր վրա դարձնէ ում հարկն է նրանց ուշադրութիւնը։ Պէտք է պատժել խաբեբայ վաճառականներին և ազատել հասարակութիւնը նրանց հարստահարութիւնից։»

—

Նոյն լրագիրը հաղորդում է, որ անցեալ դեկտեմբերի ընթացքում Եկատերինոսլաւի նահանգում 16 հրդեհ է պատահել, ընդհանուր վնասը եղել է մօտ 25,993 ր.։ Չորս անգամ հրդեհը դիտմամբ են արել, տաս անգամ անյայտ պատճառներից է պատահել և երկու անգամ անզգուշութիւնից։

—

„Тифис. Вѣстн.“ լրագրի թղթակիցը հեռագրում է Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻՑ. «Կառավարական Սենատի առանձին բաժինը յայտնեց իր վճիռը քաղաքական յանցաւորների մասին։ Մեղադրվածներից 90 մարդ արդարացել են, դրանց թւում և միակ կովկասեցի մեղադրված տ. Մ. Շահվերդեանը։ 37 մարդ արսորի են դատապարտված և մէկը միայն հանքեր է ուղարկվելու։ Բոլոր մնաց մեղադրվածները ժամանակաւոր բանտարկութեան են դատապարտած։»

—

ԱԼԵՔՍԱՆԴՐՈՊՈԼԻՑ մեզ գրում են հետևեալը՝ Ամենաանհրաժեշտ պիտոյքները այստեղ շատ թանգ են։ Փայտի սաժէնը արժէ 140—160 ռուբլ, մսի գրվանքան 10 կ., ձուն երկուսը 5 կոպ., հասարակ ալիւրից թխած հացը 6—7 կ.

—

ՂԱՐՍԻՑ մեզ հաղորդում են, որ այդ քաղաքի շրջակայքում ոլիքը սաստիկ տարածված է և այդ հիւանդութենից մեռնողների թիւը նշանաւոր է։ Այդ հիվանդութեան զոհ են գնում ոչ թէ միայն աղքատ դասակարգի մարդիկ, այլ և հարուստները։ Մանաւանդ մեծ է բժիշկներից և ողորմած քոյրերից մեռնողների թիւը։

—

ԱԼԵՔՍԱՆԴՐՈՊՈԼԻՑ մեզ գրում են, որ չը նայելով ցրտին և ամեն օր եկող ձիւնին ոլիքը շարունակ տարածվում է և օրական 4—5 մարդ զոհ է տանում։

—

«Մշակի» խմբագրութիւնը չնորհակալութեամբ ստացաւ «ԵՐԿՈՒ ԲԱՐԵԿԱՄ ԿԱՄ ՊԵՏՐՈՍԻ ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹԻՒՆԸ ԴԷՊԻ ՃԱՊՈՆԻԱՑ» գործ Օտտակար Շուպպիայի, թարգ. Ստեփանոսի Սուլխանեանց։ Երիտասարդ թարգմանիչը Ներսիսեան դպրոցի աշակերտներից է։ Նա պատրաստ ունէ և մի ուրիշ թարգմանութիւն, որ շուտով լոյս կը տեսնի։ Գրքոյկի օգուտը նշանակած է գաղթած հայերի համար։ Այողութիւն ենք ցանկանում պ. Սուլխանեանցին, եթէ կը շարունակէ իր գործունէութիւնը։ Գրքոյկի կարդալուց յետոյ կը յայտնենք մեր կարծիքը թէ նրա բուանդակութեան և թէ լեզուի մասին։ «Մշակի» խմբագրատանը այդ գրքից ծախվում է 25 օրինակ։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Կ. ՊՕԼՍԻ ՀԱՅԵՐԻ ՇԱՐԺՈՒՄԸ

—

Կ. Պօլսի հայերը նորից սկսան շարժվել մի կենսական հարցի պատճառով որին արդէն ծանօթացրել ենք մեր ընթերցողներին։

Թուրք կառավարութիւնը որ մինչև անժամ իրա քրիստոնեայ հպատակներից փող էր ստանում զինուորական ծառայութեան փոխարէն, այժմ կամենում է զօրք առնուլ և ոչ թէ փող։ Կ. Պօլսի հայերն չեն ընդունում այդ որոշում, մերժում են զօրք տալ այս պատերազմի ժամանակ, չեն կամենում մինչև անգամ քաղաքապահ զօրք դառնալ, որի պատճառով մեծ շարժում կայ այժմ Կ. Պօլսի մէջ և դեռ անորոշ է թէ այդ շարժումը ի՞նչ հետևանքի կը հասնի, ի՞նչպէս կորոշվի այդ հարցը։ Սուլթանը հարկաւոր կը դատի՞ բռնի գործադրել տալ իրա հրամանը, թէ խոհեմութիւն կը կարծէ առ այժմ լռել։ Կ. Պօլսի հայերն էլ կը շարունակե՞ն իրանց դիմադրութիւն մինչև վերջ, չը վախենալով դոյա ծանր հետևանքներից, թէ կը ստիպվեն կատարել Սուլթանի հրամանը։ Մօտաւոր ապագան կը յայտնէ մեզ այդ ամենը։

Այժմ մենք կամենում ենք պարզել այստեղ այդ հարցը. թէ Թիւրքիայի հայերը ինչի՞ մերժում են զինուորագրութիւնը և միթէ պարտաւոր չեն դոքա իրանց բնական երկիրը պաշտպանել, իրանց վրա իշխող տէրութեանը զօրք տալ։

Պարտաւորութիւնը առանց իրաւունքի չէ լինում։ Իրաւունք և պարտք երկու եղբայրներն են որով մարդիկ, ազգեր, ընկերութիւններ կապվում են իրար հետ։ Պարտաւորութիւններ պահանջել մի անձից, մի ազգից և չը տալ նրան փոխադարձ իր իրաւունքներ, դա կատարեալ բռնաւորութիւն է և այդ պարտաւորութիւնների գործադրութիւնը այդ անձի, այդ ազգի կողմից ստրկութիւն է։

Թիւրք կառավարութիւնը որ պարտաւորութիւն է դնում հայերի, և առհասարակ իրա քրիստոնեայ հպատակների վրա, օսմանեան քաղաքացու անունով պաշտպանել Թիւրքիան, իրանց բնական երկիրը, Թիւրք կառավարութիւնը որ պահանջում է հայից կատարել քաղաքացու ամենածանր պարտաւորութիւնը, զոհ բերել իրա կեանքը Թիւրքիայի համար, միթէ տո՞ւած է նրան փոխադարձ իրաւունքներ որ ապրի օսմանեան քաղաքացիների նման։

Մենք մեր կողմից ոչինչ չենք ուզում պատասխանել, այլ մեր ընթերցողներին կը ցոյց տանք հայաստանցիների այժմեան դրութեան մի թշուառ պատկերը, արտագրելով Կ. Պօլսի «Մասիս» լրագրից, նրա տրած մի քանի առաջարկութիւններով միասին։

Հարկաւոր է գիտենալ որ «Մասիս» կիսապաշտօնական թերթ լինելով կամ ձևանալով, այն աստիճան սեղմուած և չափաւոր ուղղութիւն ունեցած է որ քսան և վեց տարի է հրատարակվում և միշտ զգուշանալով Թիւրք կառավարութեան դէմ գրելուց, այդ երկար ժամանակամիջոցի մէջ և ոչ մի անգամ չէ արգելուած, և ոչ մի անգամ գոնէ գրաւոր ազդարարութիւն չէ ստացած, մինչև որ ուրիշ խմբագիրներին շատ անգամ պա-

---

ինքն իր անձին չը պատկանող, ուրիշի ստրուկը ուրիշի սեփականութիւն համարվողը իրաւունք ունի սիրելու, շարունակում էր նա հեռվհեռ տաքանալով։ Ոչ, ես ինքս գիտեմ որ իրաւունք չունեմ։ Եւ ինչի համար սիրել. տանջվելու համար միայն,—չարժէ. պակվել,—ես իրաւունք չունեմ։ Իսկ շատերի օրինակով այն աղջիկը իմ սիրուհի դարձնել, նրանից երեխաներ ունենալ և յետոյ այդ երեխաներին իրանց մօր հետ միասին էլ թշուառութեան մէջ դցել, ես ինձ չեմ թոյլ տայ։ Ուրեմն կատարեալ իրաւունք ունէիք ինձ ծաղրել, վերջացրեց նա, կրկին ծածկելով իր երեսը իր երկու ափերին, լայն և կոշտ ձեռքերով։

—Ես մի բան միայն ուզումէի ձեզ նկատել, բարեկամ, սկսեցի ես ընդհատելով բոպէական լռութիւնը, որ այն աղջիկը, այն ձեր Լիզան, կամ ինչպէս մենք, տան կենդանիներս նրան անուանում ենք Լիզավետա Իվանովնա արժանի չէ որ դուք նրան այդքան սիրէիք։ Նրա մաշված սիրտը էլ ոչ ոքին սիրել չէ կարող. հաւատացնում եմ ձեզ։

—Շատ կարելի է որ ես յարիշտակվեցայ, որ նա արժանի չէ որ մի մարդ նրան սիրէր. ես այդ բոլորը ընդունում եմ, ընդունում եմ և այն, որ նա չէ սիրում ինձ, գուցէ արհամարհում է ինձ, գուցէ ծաղրում է ինձ,—բայց այնու ամենայնիւ ես նրան սիրումեմ։ Դուցէ ես սիրեցի նրան, որովհետև ամեն մարդ պէտք է մի անգամ սիրի, բայց գլխաւորապէս, կարծում եմ, սիրեցի այն պատճառով որ այդ աղջիկը իմ կեանքիս մէջ առաջին մարդկային էակ էր, որ ինձ հետ լաւ վարվեց։ Ինձ հետ ոչ ոք երբէք լաւ չէ վարվել....

—Ասենք թէ Լիզան ամենքի հետ շատ լաւ է վարվում.... Նրա համար մի և նոյն է դուք լինէք, ես լինեմ, թէ ուրիշը լինի, նկատեցի ես։

—Շատ կարելի է, կրկին համաձայնվեց Մարուքեանց, բայց ես չեմ կարող մոռանալ այն առաջին ապաւորութիւնը որ նա ինձ վրա գործեց, նրա հետ իմ առաջին ծանօթութեան ժամանակ...Ես կոշտ, կոպիտ էի նորա հետ խօսելու ժամանակ, իսկ նա մեղմ, բարի էր ինձ հետ.... քանի ես կոպիտ էի դառնում, այնքան նա աւելի բարի և համբերող էր լինում.....Բայց.... բաւական է այդ մասին խօսելու, յանկարծ կըտրեց նա ինքն իր խօսակցութիւնը, ես դուրս եկայ այն տունից և կարծեմ շատ լաւ արի որ դուրս եկայ։ Ի՞նչ օգուտ....ես իրաւունք չունեմ զգալ....լաւ է հեռու մնամ։ Թէև ես շատ ուրախ կը լինէի ձեզ հետ յաճախ տեսնվելու, դիմեց նա ինձ փոխելով իր խօսակցութեան նիւթը, բայց ես ձեզ մօտ էլ չեմ գայ, քանի որ դուք դեռ այնտեղ էք կենում։ Իսկ ձեզ խնդրել ինձ մօտ շուտ շուտ գալը ես չեմ համարձակվում։

—Եթէ այդպէս է, ես էլ կաշխատեմ թողնել բնակարանս և ուրիշ մի տուն որոնել որ դարձեալ առաջվայ պէս կարողանանք ձեզ հետ իմ սենեակումս շուտ շուտ տեսնվել։

Մարուքանց ոչինչ չը պատասխանելով ինձ մօտեցաւ ինձ, պինդ սեղմեց ձեռքս և մենք միմանցից բաժանվեցանք։

IX

Մարուքեանց ուզիղ էր ասում։ Այն ընտանիքը, որից ես սենեակ էի վարձում, մի սարսափելի անբարոյական ընտանիք էր, բայց նա բացառութիւն չէր կազմում Մոսկվայում. նա ներկայացնում էր Մոսկվայի միջին դասին պատկանող ընտանեկան բարոյականութեան տիպը։

Երևակայեցեք ձեզ մի պառաւ, տգեղ, քաչալ, միշտ կեղտոտ հագնված այրի կին, որ ամբողջ օր կամ կերակուրներ էր պատրաստում խոհանոցի մէջ, կամ լուածք էր անում։ Նա պահումէր իր մօտ իր երկու որդիներին իր մի աղջկան և մի երիտասարդ սիրեկանին։ Սիրեկանը շատ լաւ ածումէր պիանօի վրա և կարող էր դորանով ապրել։ իր հացը ճարել,—բայց արդէն փչացած, աշխատանքի սովորութիւն կորցրած մարդ էր և գրեթէ ամբողջ օրը հարբած էր լինում։ Երեկոյեան երբ նա լաւ հարբած տուն էր վերադառնում, պառաւը նրան լաւ ծեծում էր, և կուլի ու ծեծվելու ձայները հասնում էին մինչև մեր, ուսանողներիս սենեակները։ Պառաւ կնոջ մեծ որդին գործակատար էր մի խանութի մէջ և ունէր երկու սիրուհի, որոնցից մինը իր մօր աղախին էր։ Սա վենում էր երիտասարդի հետ որպէս սիրուհի, մի և նոյն ժամանակ ամբողջ օրը պառաւին օգնում էր լուածք անել, կարել, կարկատել, ու կերակուրներ պատրաստել։ Իսկ շաբաթ կամ կիրակի օրերը գալիս էր երիտասարդի երկրորդ սիրուհին, մի բաւական գեղեցիկ կարուանոց աղջիկ։ Նորա գալու օրը միշտ սկանդալ էլը լինում տան մէջ. երկու սիրուհիները անպատճառ միմեանց հետ կռւում էին, շատ անգամ միմեանց մազերից էին քաշում, պատահում էր որ մէկ երկու ապտակ ընծայում էին և իրանց սիրեկանին։ Երկրորդ որդին, մի տասն և ինն տարեկան տղայ, ոչինչ պարապմունք չունէր, ամբողջ օրը կամ սորա և նորա սենեակ էր մտնում, ամեն բանի վրա խօսում, բոլոր գաղտնիքները պատմում և վերջը միշտ մի տաս կամ քսան կոպէկ պարտք էր խնդրում կենդանից, որ ի՞ինարկէ երբէք նրան չէր վերադարձնում, կամ մօր խոհանոցից խորոված մսի կտորներ ու քաղցրեղէններ էր գողանում, ու կենդանների սենեակներ էր թախ կենում որ ուտէ գողացածը։

Պարզ բան է որ այդ տեսակ անբարոյական շրջանի մէջ Լիզայի պէս մի աղջիկ պատահելով դուք ակամայ Մարուքեանցի հետ պէտք է խոստովանվէիք որ նա այդ թշուառ ընտանիքում մի ծաղիկ էր, որ նա մեղք էր այնտեղ մնալու։

Լիզավետա Իվանովնա գեղեցիկ չէր, բայց սիրուն էր։ Նրան փողոցում պատահելիս, կամ առաջին անգամ տեսնելիս՝ նրա երեսին, քայլվածքին, կազմուածքի կամակերպութեանը նայելով, դուք կասէիք որ այդ աղջիկը շատ շատ տասն և եօթ տարեկան էր, բայց երբ ծանօթանալով նորա հետ լաւ սկսում էիք ուսումնասիրել նրա երեսը,—նկատում էիք նրա աչքերի տակ սև բիծեր, նրա ճակատի վրա բաւական խոր կնճիռներ որոնք վկայում էին թէ այդ կինը այնքան դերահաս չէր, որքան սկզբից երևում էր ձեզ, թէ նա իր կեանքում շատ դառն բոպէներ

տահում է Կ. Պոլսի մէջ լրագիրը խափանուիլ, տուգանքի դատապարտուիլ, բանտարկուիլ և մինչև անգամ մեռնել, ինչպէս որ մեռան անցած տարի «Արարատ» խմբագիր պ. Այվազեանը և «Մէղմուայը Հավատիսի» խմբագիր պ. Մարգարեանը որովհետև համարձակված էին Տրապիզոնի մէջ մի հայ քահանայի հետ եղած հարստահարութիւնը հրատարակել։

Նաև, ինչ հարստահարութիւններ որ արտագրում ենք այստեղ Մասիսից, այդ ամենը Բ. Դուռին տեղեկացրել է քուրդ Իսմայիլ փաշան, օսմանեան ասիական բանակի այժմեան ընդհանուր հրամանատարը, Մուխթար-փաշայի յաջորդը։ Ուրեմն, ընթերցողը Մասիսի այս տողեր կարդալով, կարող է ինքնին մտածել թէ իրողութիւնը որքան աւելի ծանր կը լինի քան թէ այդ գրուածը, երբ մտածէ թէ այդ տեղեկութիւններ տուողը մի քուրդ փաշա է և հրատարակողն էլ Մասիսի պէս զգուշաւոր մի թերթ։

«Երբ (Ռուսերն) օսմանեան զօրաց լաւ պատերազմելն հրամայուիլը կը տեսնէին, կը կարծէին թէ անգղեացի սպայներ կեցած են անոնց գլուխը, կամ անոնց յատակագիծը կը յօրինեն։ Ասիոյ օսմանեան բանակին հրամանատարութիւնն Անգղեայի սրը Փէմպալ զօրավարին ձեռք կը կարծէին, բայց մայրաքաղաքիս անգղեական դեսպանին հրահանգաց նայելով, որք կապոյտ տետրակին մէջ հրատարակված են, Սրը Փէմպալի պաշտօնը պատերազմական գործողութիւնները տիրել և զանոնք իր տէրութեան տեղեկագրել էր. միանգամայն պատերազմի օրինաց հակառակ անկանոն զօրաց կողմէ բնակչաց վրա ի գործ դրուած զեղծումներն իմաց տալ էր։ Սրը Փէմպալ իր այս պաշտօնը խղճի մտօք կատարեր է, և Պայազիտի ու Ալաշկերտի կողմերն՝ ինչպէս նաև ուրիշ տեղեր ի գործ տրուած անգղութեանց վրա Մուխթար-փաշային ուշադրութիւնը հրաւիրեր է։ Մուշերն այս ազդարարութիւններն ուշադրութեան ասեր, և զեղծումներ գործող քիւրտերն ու չէրքէզները պատժեր է։ Չերքէզներէն ոմանք կախուեր և իրենցմէ հազար հոգիէն աւելի այս պատճառաւ բանակը ձգելով դասալիք եղեր են, որով ցոյց տուեր են թէ իրենք տէրութեան ծառայելու կամ հայրենիք ու կրօնք պաշտպանելու համար չէին զինուորած, այլ պարզապէս ու աւարառութիւն ընելու համար, բայց ամեն սարսափելի է Շէյխ Ճելալէտտին անուն սինլքոր քիւրտ բռնաւորին գործած սրիկայական առևանգութիւններն և գազանական սպանութիւններն ու աւարառութիւնները։ Գարնոյ կուսակալ Իսմայել Ցագգի-փաշան այս մարդ ըսվելու անարժան Շէյխին կամ մանաւանդ Ճիւաղին բռնութեանց վրա ուշադրութիւն դարձուցած էր՝ ուստի Ճելալէդդին իր տեղը դարձեր է, Իսմայիլ Ցագգի փաշան Ահմատ պէյ անուն պաշտօնատար մը ղրկեր է անգթութեանց առաջն առնելու, և իր տեղեկագրէն կը հաստատուի թէ Ճէլալէդդին 470 կին և աղջիկ տարած էր, որոցմէ վաթսուն հատ ամենէն գեղեցկագոյններն իր անձնական գործածութեան համար պահած և մնացածն ալ իր գլխաւոր ընկերակցած բաժնած էր։ Այս առևանգութիւններն յունիսի 13-ի և 14-ի գիշերները գործուած էին։ Քիւրդերուն առևանգած՝ այսինքն յափշտակելով տարած կանանց թիւն եօթն հարիւրի կը հասնի։ Տեղական իշխանութիւններն միջոցներ ձեռք կառնուն եղեր յիշեալ կիները գտնելով իրենց ընտանեաց վրա դարձնելու։»

(Կը շարունակվի)

ՖՐԱՆՍՈՒԱ ԲԱՍՊԱՅԼ

(Շարունակութիւն և վերջ)

Բասպայլ իր այս գործերով սահմանված էր մի մեծ դեր խաղալ 1848-ի յեղափոխութեան մէջ։ Մայիսի 24-ին, ինքն առաջինը եղաւ քաղաքային վարչութեան պալատը ներկայացողներից և հրատարակեց հանրապետութիւնը, հէնց առ ժամանակեայ կառավարութիւնը դեռ չեկած։ Ազգային ժողովի անդամները ընտրված ժամանակ՝ 36,000 ձայնով դէպուտատ ընտրվեցաւ Սեն նահանգից, բայց չը կարողացաւ գնալ ժողովի մէջ իր աթոռը բռնելու, որովհետև յօգուտ Լեհաստանի եղած յեղափոխական ցոյցերին մասնակցելով, հինգ տարի բանտարկութեան վճիռ տրված էր իր դէմ Բուրգի բարձր դատարանից։ Բանտարկութեան ժամանակը լրանալուց յետոյ՝ եկաւ Բէլգիա ապաստանվելու։

Երբ հարց էր առաջարկվել նրան Բէլգիայից արտաքսելու, պ. Վիլէն որ քիչ ժամանակից յետոյ արտաքին գործերի մինիստր պէտք է լինէր և արտասանէր այն «երբէք» բառը որ այնչափ հռչակաւոր եղաւ, դա պ. Բասպայլին ընդունել էր և պահպանել իր պալատի մէջ։

1869-ին, Բասպայլ վերադարձաւ Ֆրանսիա։ Լիոնի ընտրողներից ձայների ամենամեծ բաղմութեամբ դէպուտատ ընտրվեցաւ օրէնսդիր ժողովի մէջ և Անրի Բոշֆորի հետ գնաց բազմեցաւ այնտեղ ծայրայեղ ձախակողմը։

Ցայսմի է արդէն 1870 թուականից յետոյ նրա խաղած դերը։ Բանտարկութեան դատապարտվեցաւ և թէև շատ ծերացած, կրեց որոշված պատիժը։ Բանտից արձակվելուց յետոյ, մասնակցեց 1876-ի փետրվար 24-ի ընտրութիւններին և իր ծնած քաղաքի, Կարպանտրայի ընտրողներից դէպուտատ ընտրվեցաւ։ Դէպուտատների մէջ տարիքով ամենին երիցագոյնը լինելով, ժողովի առաջին նստին նախագահեց և այն ներկայացրեց Սենատին, դէպուտատների ընտրութիւնները վաւերացված ժամանակ։

Ֆրանսուա—Վէնսան Բասպայլ ծնած էր Կարպանտրա քաղաքում 1794 թուի յունվարի 29-ին։ Ուրեմն մի քանի օր էր միայն մնացել որ 84 տարեկան լինէր։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ. յունվարի 25-ին։ Այսօր քաղաքապետ գեներալ-ադիւտանտ Տրէպովի խնդրատուներին ընդունելու ժամանակ խնդրատուներից մի տարեվանակ արձակեց գեներալ Տրէպովի վրա և վիրաւորեց նրան փորի մէջ, որտեղ գնտակը մնաց։ Գենարալի առողջութիւնը շատ վտանգաւոր դրութեան մէջ է։ Լսածին նայելով, յանցաւոր կնոջ ազգանունը Կոզլովա է։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ յունվարի 24-ին։ Ռուսաց ռուբլ արժէ Լոնդոնի վրա $26^3/_8$ պէնս, Փարիզի վրա ռուսաց 100 ռուբլ արժէ 277 ֆ. 75 սանտիմ, Բէրլինի վրա արժէ 225 մարկ։ Պետական բանկի 5% տոմակը առաջին շրջանի արժէ $96^3/_4$ ռուբլ երկրորդ $96^3/_8$ ռ. երրորդ 95 ռ., չորրորդ 95 ռ., Առաջին ներքին 5% փոխառութեան (վեիգրիշնի) տոմակը արժէ 237 ռ., երկրորդ 237 ռ., 50 կոպ., Արևելեան փոխառութեան տոմակը արժէ $93^1/_2$ ռ։ Պոլուիմպէրեալի գինը 7 ռուբլ 49 կոպէկ է։ Տրամադրութիւնը թոյլ է։

ՎԻԵՆՆԱ. Յունվարի 24-ին։ „Голосъ“ լրագրին հեռագրում են յունվարի 23-ից, որ գրաֆ Անդրաշի Վիէննայի կոնֆերենցիան հաւաքվելու համար պաշտօնական հրաւէր ուղարկեց երաշխաւոր պետութիւններին, որոնք պաշտպանում են Թիւրքիայի մասնակցութիւնը ձայն ունենալու իրաւունքով, բացի այն հարցերից, որ արդէն Բ. Դուռը ընդունել է, որոնց թւումն են և Ադրիանոպոլի համաձայնութեան պայմանները։ Սերբիացիներին, Ռումինների, Չերնոգորցիների, և Ցոյների այդ կոնֆերենցիային մասնակցելու հարցը Անդրաշի առաջարկում է վճռել առաջին նիստում։

ԲԵՐԼԻՆ. յունվարի 24-ին։ Այսօր Աւստրիական դեսպան գրաֆ Կարոլիի յանձնեց գերմանական կառավարութեանը կոնֆերենցիայի հրաւէրը, որ և ընդունվեց։

ՎԻԵՆՆԱ. յունվարի 24-ին։ Կաղամատներ (զինուորների տեղեր) ունեցող Keiser Max նաւը և զրահաւոր Habsbourg ֆրեգատը զինաւորվում են։

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—«Italie» լրագիրը հրատարակում է մի հետաքրքրական դատ որ վարում է Լամբերտինի կոմսուհին Կարդինալ Անտոնէլլիի եղբայրներին դէմ։ Այդ դատը մեծ սկանդալ պատճառել է Հռոմի մէջ Լամբերտինի կոմսուհին ժառանգութիւն է պահանջում կարդինալի եղբայրներից, յայտնելով թէ ինք աղջիկն է հանգուցեալ կարդինալ Անտոնէլլիի որ պապի քարտուղարը և արտաքին գործերի մինիստրն էր։ Կոմսուհին յայտնում է թէ դոկումէնտներ ունի իր ձեռքում որոնցով կարող է հաստատել իր ասածը. նաև բազմաթիւ անձեր կան որոնք պատրաստ են վկայել թէ իրանց յայտնի է որ կոմսուհին Կարդինալ Անտոնելլիի աղջիկն է։ Այս դատի գաղտնիքներից մին այն է թէ ով է կոմսուհու ճշմարիտ մայրը։ Անտոէնէլլիի եղբայրները տիպում էին յայտնել իր ճշմարիտ մօր անունը, բայց նա պատասխանում է թէ իր հօր անունը միայն յայտնելը այնչափ սկանդալի պատճառ դառաւ արդեօք ինչ բաներ չեն ասել եթէ այժմ պատճառ լինի անպատուութեան ոչ միայն մի ընտանիքի, այլ բազմաթիւ ընտանիքների, որք չեն կարծում թէ դամոկլեան սուրը կախուած է իրանց գլխի վրա։ Բայց այնու ամենայնիւ եթէ դատարանը շատ ստիպէ, ասում են թէ Լամբերտինի կոմսուհին այդ անունի վրայից քողը կը վերցնէ։

—Բերլինի լրագիրներին հեռագրում են Հռոմից յունվարի 21-ից, որ Իտալիայի նոր թագաւորը նորերումս մի նամակ է գրել Հռոմի պապին, որի մէջ Ումբերտ յայտնելով իր գահի վրա նստելը, հաւատացնում է պապին թէ միշտ կը պահպանէ որդիական զգացմունքներ դէպի սուրբ աթոռը։ Պապը պատասխանել տուեց Ումբերտին մի նամակը որի մէջ շնորհաւորում է նրան գահի վրա նստելը և անուանում է Վիկտոր-Էմմանուէլին մեծ թագաւոր։

է անցել, թէ գուցէ նորա համար էլ ոչինչ գաղտնի չը կար կեանքի մէջ....

Ամենքը սիրում էին Լիզային նորա համեստ վարքի, նորա մեղմ և բարի բնաւորութեան համար։ Նա շատ անգամ մտնում էր կենցաղներից մինի կամ միւսի սենեակը, նստում էր, խօսում էր, գիրք էր կարդում, կամ կար էր անում Սալիմեանցի, իմ, Մարուքեանցի, կամ մի ուրիշ կենցաղի սենեակում։ Երբ նա մտնում էր մեզ մօտ երեկոյեան թէյի ժամանակ, մենք առաջարկում էինք նրան մի բաժակ թէյ և նա միշտ ուրախութեամբ ընդունում էր։ Երևում էր որ նա հանգստանում էր մեր հասարակութեան մէջ։ Երբ որ երեկոյեան տան տիկնոջ սենեակներում, կամ խոհանոցում աղմուկ, ծեծ ու կռիւ էր լսվում— մենք հաւատացած էինք որ Լիզավետա Իվանովնա կը մտնի մեր սենեակներից մինը։ Նա կամաց բաց էր անում սենեակի դուռը և հարցնում էր իր քաղցր և ներդաշնակ ձայնով «կարելի է մտնեմ»։ Նա մտնում էր և սկսում էր խօսել բոլորովին անտարբեր բաների վրա, իբր թէ իր ընտանիքում պատահած սկանդալները նրան բոլորովին չէին վերաբերվում։ Նա երբէք չէր գանգատվում իր դրութեան մասին, բայց նրա հայեացքից, նրա տանջված դէմքից, որի վրա խաղում էր միշտ մի տեսակ մեղմ, բարի և մի և նոյն ժամանակ տխուր ժպիտ, երևում էր որ նա ճնշվում էր իր դրութեամբ։ Ինչ էր Լիզայի անցեալը,—մեզանից ոչ ոք չը գիտէր և չէր էլ հետաքրքրում իմանալ, բայց այժմ նա համեստ, բարի, բարոյական աղջիկ էր։ Երևում էր որ այդ աղջկայ համար թանգ էր բարի անունը, բայց մի և նոյն ժամանակ երևում էր որ նա մի նպատակ միայն ունէր իր կեանքի մէջ՝ այն է դուրս գալ, որքան կարելի է շուտ իր մօր ընտանիքից, սթափել իրանից ընտանիքի լուծը։ Իսկ այդ բանին հասնելու համար նրան անպատճառ հարկաւոր էր մի օրինաւոր, թէ կուզ աղքատ երիտասարդի մարդու գնալ։ Սուրիշ ինչպէս կարող էր նա ազատվել իր բարոյապէս ճնշված դրութենից։ Նա այնքան եռանդ, բնաւորութեան անկախութիւն և զարգացում չունէր որ հեռանար ընտանիքից և գնար իր ձեռքերի կամ խելքի վաստակով մենակ ապրէր։ Բայց մի և նոյն ժամանակ նա այնքան ինքնասիրութիւն ունէր և այնքան գործնական էր, որ երբէք չէր թոյլ տայ իրան մէկի սիրուհի դառնալ, երևի լաւ գիտենալով որ այդ առաջին քայլը անելուց յետոյ, նա այնուհետև պէտք է հեռզհեռէ ընկնէր....

Մենք ամենքս նկատում էինք որ Լիզավետա Իվանովնա բոլորիս հետ էլ միակերպ սիրալիր ձևով էր վարվում։ Մենք գիտէինք թէ նա մի նպատակ միայն ունէր իր կեանքի մէջ՝ մի ամուսին որսալ։ Իսկ ով պէտք է լինէր այդ ամուսինը,—այդ նրա համար մի և նոյն էր։

Միայն միամիտ Մարուքեանց աղջկայ իր հետ վարմունքը տեսնելով, կարող էր իրան երևակայել որ ինքն դարձել էր Լիզայի առանձին համակրութեան առարկայ։

X.

Անցաւ մի տարուց աւելի։ Մեր ուսանողական կեանքը հոսում էր խաղաղ և անվրդով մեր օրական պարապմունքների մէջ։ Մարուքեանց սասիկ շատ էր պարապում և կարողացաւ անցնել երրորդ կուրսը։ Սալիմեանց չորրորդ կուրսը անցած անհամբերութեամբ սպասում էր դարձեալ մի տարվայ լրանալը որ աւարտի իր ուսումը։

Ես կատարելով Մարուքեանցին տուած իմ խոստմունքը վաղուց թողել էի իմ հին բնակարանս և տեղափոխվել էի թատրոնական հրապարակի վրա գտնվող, նոյնպէս ուսանողական բնակարաններով լի մի տուն։ Այնուհետև ես Մարուքեանցի հետ շուտ շուտ էի տեսնվում և մենք այնքան բարեկամացանք և միմեանց մօտեցանք որ սկսեցինք միմեանց «դու» ասել։

—Կարծեմ այժմ բոլորովին հաշտվեցիր քո դրութեան հետ, հարցնում էի ես նրան, էլ չես բողոքում բժշկութեան դէմ, էլ չես անիծում բնական գիտութիւնները։

—Այո, պատասխանում էր տխուր կերպով Մարուքեանց, հաշտվեցի այնպէս, ինչպէս հիւանդը հաշտվում է մի դառն, անախորժ, զզվելի դեղի հետ, որովհետև գիտէ որ այդ դեղը նրա առողջանալու համար միակ փրկութեան միջոց է։

Մարուքեանցի հին սիրոյ առարկայի, Լիզայի վրա ես աշխատում էի երբէք չը խօսել նրա հետ, որ չը դրդեմ, չը բաց անեմ հին վէրքը։ Բայց մի անգամ նա ինքն սկսեց պատմել ինձ թէ պատահեց Լիզային փողոցում, համալսարան գնալու ժամանակ։

—Ախ, եթէ իմանայիր ինչքան գեղեցկացել է այդ աղջիկը, աւելացրեց նա։

—Չը մօտեցար նրան, չը խօսեցիր նորա հետ, հարց արի ես։

—Ինչպէս մօտենամ, երբ նրան ամեն անգամ պատահելիս, զգում եմ թէ չփոթված եմ լինում, գունատվում եմ....

—Այդ քո մեղն է։ Հաւատացնում եմ քեզ որ եթէ աշխատեիր մօտենալ նրան, նրա հետ մօտիկ ծանօթանալ, վաղուց է արդէն այդ աղջիկը կը կորցնէր քո աչքերում իր հեղինակութեան, իր անմատչելիութեան փայը, դու կը համոզվեիր որ նա շատ հասարակ մանկանացու է և մինչև անգամ մի չնչին, սովորական երեւոյթ է կազմում կանանց դասի մէջ։ Իսկ չը մօտենալով նրան, քեզ նրանից հեռու պահելով, դու ինքդ քեզ տանջում ես և կազմում ես քո սեփական գլխում իրականութեան մէջ չեղած իդէալը։

—Կարելի է դու ուզիղ ես ասում, կարճ կտրեց Մարուքեանց, բայց ես այդ չարեցի և չեմ կարող անել....

Մի քանի ամսից յետոյ մենք իմացանք որ Լիզավետա Իվանովնա նշանվել է իրանց տան մէջ կենցաղ փոքրիկ պաշտօնեաներից մինի հետ։

(Կը շարունակվի)

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ОБЪ ИЗДАНІИ ВЪ 1878 ГОДУ

ЛИТЕРАТУРНО-ПОЛИТИЧЕСКОЙ ГАЗЕТЫ

„ТИФЛИССКІЙ ВѢСТНИКЪ“

ГОДЪ ШЕСТОЙ

Въ 1878 году ***Тифлисскій Вѣстникъ*** будетъ издаваться ежедневно, за исключеніемъ дней послѣпраздничныхъ, по прежней программѣ.

Подписка на 1878 годъ открыта и принимается въ конторѣ редакціи на Эриванской площади, № 3.

ПОДПИСНАЯ ЦѢНА:

	НА ГОДЪ.	НА ПОЛГОДА:
Въ Тифлисѣ, безъ достаки. . .	10 р.	5 р. 50 к.
» съ доставкой. . .	11 »	6 »
Съ пересылкой по Имперіи. . .	12 »	6 »
За границу по почтовому союзу.	15 »	8 »

Иногородные адресуютъ свои требованія въ Тифлисъ въ редакцію ***Тифлисскаго Вѣстника***.

Դվորցովի փողոցի վրա ԱՐԾՐՈՒՆՈՒ ՎԵՐՆԱՑԱՐԿՈՒՄ խանութ № 82 ծախվում է ԹԱՆԱՔ, սև և գոյնզգոյն կարմիր, մաւի. Մեծ չիչը արժէ 50 կ. Մեծ քանակութեամբ առնողներին զիջումն կանվի. Օտարաքաղաքացիներին կարելի է ուղարկել դիւժիններով. Այս թանաքի լաւ յատկութիւնը այն է, որ չէ այրում գրիչը և չէ բորբսնում. Բացի այդ ծախվում է նոյնպէս ՁԻԹ թէ կոշիկների համար և թէ ակների համար. Այդ ձիւթը քսած կոշիկը թացութիւն չի ընդունի, եթէ մինչև անգամ մէկ շաբաթ մնաց ջրի մէջ. Ակների ձիւթը վատ հոտ չունէ.

1—3

ԹԻՖԼԻՍԻ ԳՈՐԾԱԿԱՏԱՐՆԵՐԻ ՓՈԽԱԴԱՐՁ ՕԳՆՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ վարչութիւնը, պատիւ ունի յայտնելու որ, անդամների տոմսակներն կարելի է ստանալ պ. Ծատուրեանցի լամպաների դեպօում և վարչութեան անդամների (ստարշինաների) մօտ, տարեկան վճարը 10 րուբլ է:

3—5 (3)

«Մշակի» խմբագրատանը ծախվում է «ԵՐԿՈՒ ԲԱՐԵԿԱՄ ԿԱՄ ՊԵՏՐՈՍԻ ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹԻՒՆը ԴԷՊԻ ՃԱՊՈՆԻԱՑ» գործ Օտտակար Շուպպիայի թարգմանութիւն Ստեփանոսի Սուլխանեանց. ԳՐՔՈՑԿԻ ՕԳՈՒՏը ՆԸՇԱՆԱԿՎԱԾ է ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ. Ծախվում է Զ. Գրիգորեանցի գրաւաճառանոցում, պ. Ա. Յովհաննեսեանցի գրադարանում և թարգմանչի մօտ Ներսիսեան դպրոցում.

1—3

Մէկ երիտասարդ ցանկանում է ունենալ տներում ՄԱՍՆԱՒՈՐ ԴԱՍԵՐ. Պատրաստում է նոյնպէս գիմնազիայի ԱՌԱՋԻՆ, ԵՐԿՐՈՐԴ և ԵՐՐՈՐԴ դասատունների համար. Հասցէն կարելի է իմանալ «Մշակի» խմբագրատանը.

Молодой человѣкъ желаетъ имѣть *частные уроки*. Приготовляетъ дѣтей въ первый, второй и третій классы гимназіи. Адресъ можно узнать въ редакціи „Мшакъ“.

1—8

Ստորագրութիւն 1878 թւի համար

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

«ԴՐՕԷԲԱ»

1878 թվին կը հրատարակվի մի և նոյն պրոգրամայով և մի և նոյն ժամանակներում այսինքն ԱՄԵՆ ՕՐ ԻՆՉՊԷՍ և այս տարի.

ՍՏՈՐԱԳՐՈՒԹԻՒՆԸ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ Է

Թիֆլիսում. խմբագրութեան մէջ, Սերգիեվսկի փողոցի վրա Ի. Գ. Ամիրաղովի տանը, № 8 «Քաղաքային Դումայի մօտ».

Օտարաքաղաքացիք դիմում են իրանց պահանջով «Դրօէբա» լրագրի խմբագրութեանը հեռևեալ հասցէով. Въ Тифлисъ въ Редакцію газ. «Дроеба».

Մէկ տարվանը. . . .	8 р.	— »
1/2 տարվանը. . . .	5 »	50 к.
4 ամսվանը. . . .	3 »	— »

Ծանօթութիւն. Բացի վերոյիշեալ ժամանակներից ուրիշ ժամանակ ստորագրութիւնը չէ ընդունվում.

Подписка на 1878 годъ.

ПОЛИТИЧЕСКАЯ И ЛИТЕРАТУРНАЯ ГАЗ.

ДРОЭБА

въ 1878 году будетъ выходить по той же программѣ и въ тѣже сроки, т. е. ЕЖЕДНЕВНО,

ПОДПИСКА ПРИНИМАЕТСЯ

въ Тифлисѣ: въ редакціи, на Сергіевской улицѣ, домъ И. Е. Амирагова, № 8 (около Городской Думы).

Въ Тифлисъ въ Редакцію газ. „Дроеба.“

ПОДПИСНАЯ ЦѢНА

На годъ	8 р.	— „
1/2 года	5 „	50 к.
4 мѣсяца	3 „	— „

Примѣчаніе. На другіе сроки, кромѣ поименованныхъ, подписка не принимается.

3—3

„КАВКАЗЪ“

ГАЗЕТА ПОЛИТИЧЕСКАЯ И ЛИТЕРАТУРНАЯ

ВЫХОДИТЪ ЕЖЕДНЕВНО КРОМѢ ДНЕЙ ПОСЛѢПРАЗДНИЧНЫХЪ

ПОДПИСКА НА ГАЗЕТУ

„КАВКАЗЪ“ ЗА 1878 Г. ПРИНИМАЕТСЯ НА СЛѢДУЮЩИХЪ УСЛОВІЯХЪ.

СРОКИ	Съ дост. въ тиф. Руб.	Съ дост. въ тиф. Коп.	Съ пересылкою иногород Руб.	Съ пересылкою иногород Коп.
На годъ	11	50	13	„
На полугода.	6	„	7	„

ПОДПИСКА ПРИНИМАЕТСЯ:

Въ Тифлисѣ въ конторѣ редакціи, въ домѣ Хосроева, на Вельяминовской улицѣ.

Контора открыта ежедневно съ 9 ч. утра до 2 пополудни и съ 6 до 8 ч. вечера

3—3

ԹԻՖԼԻՍԻ ՎԱՃԱՌԱՆՈՑ (Յունվարի 25-ին)	Ր.	Կ.
Ոսկին (պօլումպերիալը)	8	5
Հին 82 պր. մ. արժ. 1000 մ.	1400	—
Հին 20 կ. 72 պր. 1000 »	1200	—
Վիգրիչնի 5% առաջի փոխառութեան տոմ. 100 »	233	—
Երկրորդ 5% վիգրիչնի »	235	—
Մարսելի կուրսը 265—	100	—
Լօնդօնի կուրսը Օդեսայի վրա.	9	48
	9	60
Վենայի կուրսը ածէ 121 գլ.	100	—
Դաւրեժի բարաթը. . .	5	—
Առևտրական բանկի ակցիան 200 մ. . . .	265	—
Փօթի Թիֆլիսեան երկաթուղու ակցիան 125 մ.	125	—
Շաքարը բրօցկու . .	9	10
» միւս տեսակը.	9	—
» չաքարաւազը .	8	20
» տրանզիտ. .	10	—
» մաքսը վճարած	16	—
Բամբակը Երևանու Ամերիկայի սերմից. . .	8	30
Միւս տեսակը հին սերմից.	8	—
Բուրդը թուշի . . .	7	50
» թարաքամի .	4	60
Ալիւր Շորագալու . .	2	—
» Երևանի. . . .	—	—
Գարին.	1	40
Մոմը բնաճարպի (стеар.)	14	50
Մետաքս Նուխվայ. .	175	—
Կախեթուշը. . . .	98	—
Կոկոնը Նուխվայ (բոժ.)	46	—
Ֆրիզոնը (լասը) Աղուլեաց	55	—
Կոֆէն մօկօի. . . .	30	—
» լիվանի . . .	—	—
» մարտինկօյինը	28	—

ՀԵՌԱԳԻՐ	Ր.	Կ.
Կովկասի և Անդրկովկասի քաղաքները . . .	1	
Ռուսաստան .	2	
Աւստրիա . .	3	
Անգլիա. . . .	4	
Գերմանիա. . .	2	88
Ֆրանսիա . . .	3	75

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ՄԱՆԿԱԲԱՐՁԱԿԱՆ ԴՊՐՈՑ

(Վէրայի վրա № 38)

Ծնողկանների ընդունելութիւնը ցերեկվայ և գիշերվայ ամեն ժամանակ, օրը 50 կօպէկ վարձով, իսկ չքաւորներին անվարձ. Առանձին սենեակներում ամիսը 30 — 50 րուբլ. Կանանց իւանդութիւնների բաժանմունքի մէջ վարձը ընդհանուր սենեակում 18 րուբլ, իսկ մասնաւոր սենեակներում 30 րուբլ ամսական.

Երթևեկ հիւանդ կանանց և երեխաների ընդունելութիւնը ամեն օր, բացի կիրակի օրերից, 9 1/2 մինչև 11 ժամ առաւօտեան. Բժշկապետ Անանով.

ՓՕԹԻ-ԹԻՖԼԻՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

Թիֆլիսից մինչև Փօթի (ճանապարհորդների գնացքը) 9 ժամին 21 րոպէ առաւօտեան. Մինչև Միխայլօվօ (խառն գնացքը) երեկոյեան 5 ժամ. 18 րոպէ.

	առաւօտ.	երեկոյեան
Թիֆլիսից . .	9. 21	5. 18
Գօրի . . .	11. 58	9. 43
Միխայլօվօ.	1. 29	11. 57
Ռիոն . . .	6. 47	
Փօթի . . .	9. 40	

	առաւօտ.
Փօթիից . .	9. 13
Ռիոն . . .	12. 13
Միխայլօվօ. .	5. 39
Գօրի. . . .	7. 5
Թիֆլիս. . .	9. 31

	առաւօտ.	երեկոյեան
	1 37	
	4 8	
	7. 56	

Թիֆլիս գալիս է առաջին գընացքը երեկոյեան 9 ժ. 31 ր. երկրորդը՝ առաւօտեան 7 ժ. 56 ր.

Տեղերի գինը՝ Թիֆլիսից

	I կլաս.	II կլ.	III կլ.
Մցխէթ .	90	68	38
Գօրի. . .	3. 20	2. 40	1. 33
Սուրամ.	5. 22	3. 92	2. 18
Ռիոն. . .	9.	6. 75	3. 75
Փօթի . .	13. 1	9. 75	5. 42

ՓՕՍՏ

Ամեն տեսակ թէ նամակներ, թէ լրագիրներ և թէ ծանր փօստ ամեն տեղ ուղարկելու, ընդունվում են ամեն օր, առաւօտեան 8 ժամից մինչև 1 և կէսօրից յետոյ 3 ժամից մինչև 7. Իսկ կիրակի օրերը հասարակ նամակներ մինչև 10 ժամ առաւօտեան և 3—7 երեկոյեան.

Ռուսաստանից և Արտասահմանից փօստը ստացվում է Թիֆլիսում ամեն օր. Բագուի տրակտից՝ երեքշաբթի և շաբաթ օրերը. Երևանի տրակտից՝ երկուշաբթի, հինգշաբթի և շաբաթ. Փօթի-Թիֆլիսեան երկաթուղուց ամեն օր. Նուխու տրակտից՝ չորեքշաբթի և կիրակի. Բելիկլիչի տրակտից՝ երեքշաբթի և շաբաթ.

ՆԱՄԱԿՆԵՐ	կօպ.
Բաց նամակը արժէ .	4
Ռուսաստան և Եւրոպայի բոլոր երկիրները նամակը արժէ	8
Ամերիկա	8
Պարսկաստան . . .	8
Հնդկաստան . . .	70
Եգիպտոս .	27

ԲԺՇԿԱՆՈՑ

Հիւանդների ընդունելութիւնը առաւօտ 9 ժամից մինչև 1 կէսօրից յետոյ.

Երկուշաբթի. Վէրմիչէվ և Գօրալևվիչ ներքին հիւանդութիւններ, Քուչարեանց վիրաբուժական և ականջի հ. Սօկոլով երեխաների և ներքին հ.:

Երեքշաբթի. Վէրմիշէվ ներքին հ. Ռէյս աչքի հ. Ա. Բախուտով, կանանց, երեխաների հ. և մանկաբարձութեան, Բակստ սիֆիլիտական և կաշու հ.

Չորեքշաբթի. Վէրմիչէվ ներքին հ. Դուբէլիր կրծքային և երեխաների հ. Բակստ կրծքային և ջղային Սօկոլով վիրաբուժական հ.

Հինգշաբթի. Վէրմիչէվ ներքին հ. Կ. Բախուտով, կանանց և ջղային հ. Բակստ վենեական և կաշու հ.

Ուրբաթ. Վէրմիշէվ ներքին հ. Թախուտով մանկաբարձութեան, կանանց և երեխաների հ. Քուչարեանց սիֆիլիտական և միզային գործարանների հ.

Շաբաթ. Վէրմիշէվ ներքին հ. Դուբէլիր երեխաների և կրծքային հ. Ռէյս աչքերի հ. Բակստ կրծքային և ջղային հ. Սօկոլով վիրաբուժական հ.

«ՄՇԱԿԻ» ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

—

—ԽԱՐԿՈՎ. Ա. Մ. Ձեր նամակը կը տպենք հետևեալ համարներից մէկում. Հաղորդեցէք տեղական լուրեր.

—ԱԼԷՔՍԱՆԴՐԱՊՕԼ. Մ. Մ. Ձեր նամակի մի մասը տպեցինք, միւսից աւելի յարմար գտանք՝ լուրեր քաղել.

—ԲԱԳՈՒ. Խ. Ք. Մ. Շնորհակալ ենք ձեր համակրութեան համար. Մենք ոչինչ չենք խնայելու մեր գործը աջող կերպով առաջ տանելու.

—ԹԻՖԼԻՍ. Ս. Ս. «Մշակի» համարները ուղարկվում են ձեր ասած ստորագրողին.

—ԹԻՖԼԻՍ. Գ. Մ. «Մշակի» համարները արդէն հասցրած են պ. Է., այնպէս որ գանգատը բոլորովին անտեղի է.

Дозволено Цензурою 25 Января 1878 г. Тифлисъ. Типографія Мартиросіанца Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ